ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 18

«23» 01 2021 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 105 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Չախոյանին ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 27.01.2021թ. N 16-Ա հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասին 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 04.09.2020թ.՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր գիտամեթոդական խորհուրդ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի սեպտեմբերի 6-ի N 44 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 105 հրամանի N 1-ին հավելվածով հաստատված ցանկի 6-րդ կետում՝

«Արթուր Չախոյան - ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ» բառերը փոխարինել «Արթուր Չախոյան - ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ